




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

223

8

U-55



346 IX - 1322  
H

Handwritten signatures and notes on the left page, including a large signature and the word "Hypocrite" written vertically.

2011

ՀԻՄՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԻՔ ՊԵՊԵԱՆՅԻ

# ՄԻՐՈՅ ԶՆՋՈՒՄՆ

Ընդհանուր

ՊԵՏՐՈՍ ՏԵՐ-ՅՈՎ ՀԱՆՆԻՍԻԱՆՅՈՒՆ

ՇՆՈՇԻ

Տպարան Ղազար Հայկոյ Հոգևոր Տնօրէնութեան

1886.

2003




208  
U-53  
uy

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԻՔ ՊԵՊԵԼՆՑԻ

# ՄԻՐՈՅ ԶՆՋՈՒՄՆ

մե. 15.862



Իրաւանի

ՊԵՏՐՈՍ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԼՆՑ



ՇՈՒՇԻ

Տպարան Շուշու Հայոց Հոգևոր Տնօրէնի

1886.



Дозволено цензурою. Тифлисъ, 20 Августа 1886 г.

## ՍԻՐՈՅ ԶՂՁՈՒՄՆ.

(Պատահած դէպք)

1008  
35923 P  
Աշնանային եղանակ էր: Արեւագը պարզ  
փայլում էր երկնականարի վերայ, տարածելով  
իւր անդոր ճառագայթները երկրի անսահման տա-  
րածութեան վերայ: Մի պայծառ առաւօտ,  
երբ արեգակը շողշողելով բարձրանում էր երկնա-  
կամարի վերայ, Փարիզում բժշկապետ Վալդ  
Սրուեղեանը մի տոմսակ ստացաւ, որով միւս օրը  
հրաւիրվում էր քաղաքի ծայրին գտնվող մի  
հիւրանոց, իւր հետ տանելով նաև վերաբուժա-  
կան բոլոր գործիքները:

Բժշկապետ Սրուեղեանը այն ժամանակնե-  
րում հաշտուած էր որպէս ամենահմուտ վիրաբոյժ:  
Նրա անունը տարածուած էր զրեթէ ամեն երկր-  
րում, այնպէս որ Անգլիայիցն անգամ նրան էին  
հրաւիրում զօրաց բանակում վերաւորուած հրա-  
մանատարներին և բարձրաստիճան մարդկանց բժըշ-  
կելու: Նա ծառայում էր Փարիզի զօրաց բանա-



կում: Սրուեղեանն առանց բացատրութեան ամենքին սիրելի էր իւր համեստ բնատրութեամբ և մաքուր ու պարզ կեանքով:

Ստացած տոմսակումը ձիշղ գրուած էր թէ թիւը, թէ նշանակած տեղը, սակայն մի բան պակաս էր—տոմսակը անստորագիր էր: Այդ էր պատճառը, որ Սրուեղեանը մաաժման մէջ ընկաւ. «ի՞նչ է այն գրողը հիւանդ է կամ հիւանդ ունի, արդեօք ինչո՞ւ չէր ստորագրուել», ասում էր նա, և կարծելով՝ որ ցանկանում են իրան ծաղրել, վճռեց չը գնալ:

Անցաւ երեք օր և ահա բժշկապետը նորից մի տոմսակ ստացաւ, բայց այնպէս ստիպողական ձևով գրուած և աւերացրած, որ հետեւեալ առաւօտը 9 ժամին պէտքէ կառք ուղարկուի: Նշանակուած ժամին կառքը կանգնեց բժշկապետի բնակարանի առաջ: Առապանը հնչեցրեց զանգակը և ահա ծառան երևաց:

— Բժշկապետ Սրուեղեանը տանն է, հարցրեց նա:

— Այո տանն է, պատասխանեց ծառան:

— Ասացէ՛ք կառքը ձեզ է սպասում, վրաբերեց կառապանը:

Սրուեղեանն այլևս բացասել չէր կարող. Ժողովեց իւր վերաբուժական բոլոր գործիքները

և կառք նստեց: Առքը հասաւ Փ. հիւրանոցի դրան. բժշկապետը հարցրեց կառապանից. «նո՞ւ է ինձ հրաւիրողը»:

— Զը գիտեմ, պատասխանեց կառապանը:

«Ո՞վ է քեզ իմ յեանից ուղարկել», հարցրեց Սրուեղեանը:

Այս հարցի վերայ դրանք երևաց շքեղ հագնուած մի երիտասարդ, բժշկապետին ջերմ համակրանքով ընդունեց և ներս հրաւիրեց: Աթիւսն բարձրանալով սանդուխներով մտան շքեղութեամբ զարդարուած մի սենեակ: Արիտասարդը շատ ուրախ էր և խօսելուց երևում էր որ Անդրեայի է: Նա հրաւիրեց Սրուեղեանին նստել:

Բժշկապետը գտնուելով նրան՝ ասաց անդրիէրէն. «կարծեմ տոմսակ գրող և ինձ հրաւիրողը դուք էք, պարոն»:

— Մեծապէս շնորհակալ եմ պ. բժշկապետ, որ արժան համարեցիք՝ մեր խնդիրը ընդունելով, մեզ մօտ գալ: Նստ ինձ վերայ մեծ պարտականութիւն եմ դնում, որ ոչ մի ժամանակ չը մոռանամ ձեր արած այդ յարգանքը: Ախ ներեցէք, ահա շօխլազ, սուրճ, զինի և դարեջուր. չէ՞ք ցանկանալ արդեօք սրանցով զովացնել ձեր սիրտը, նախ քան դորձ սկսելը, ասաց Անդրեային:

— Թող տուէք հիւանդը տեսնելու, տեսնելը



Հարկաւոր է մեր օգնութիւնը թէ ոչ, պատասխանեց Արուեղեանը:

— Առանց որեւէ երկբայութեան և կասկածանքի Հարկաւոր է ձեր օգնութիւնը և որ դուք անպատճառ հէնց այսօր պէտք է նրան անդամահատէք ձեր հմուտեամբ: Պ. բժշկապետ, ես ուրախ եմ, որ ձեզ պէս մի հմուտ բժիշկ է մեզ մօտ և որն առանց մի որ է կասկածանքի կարող է իւր գործը կատարել: Ես ձեզ վերայ մեծ հաւատ և յոյս ունիմ, որ կը կատարէք մեր խնդիրը, ուրեմն բեցէք մեզ: Ահա ձեզ մի քսակ, որի մէջ կայ Հարկուր բուրլի, զո աշխատանքի ձեզ է պատկանում: Իսկ անդամահատութիւնը կատարելուց յետոյ՝ աւելի ես կը փարձատրուեմ, բայց եթէ հրաժարուէք իմ առաջարկութիւնից այն ժամանակ ձեզ հետ ուրիշ տեսակ պիտի փարուեմ: Տեսնում էք այս աարձանակը, դուք այժմ իմ իշխանութեան տակ էք գտնուում, եթէ հրաժարուէք կատարելու մեր առաջարկութիւնը, այն ժամանակ կենդանի չէք մնալ և կը սպանուէք այս յարկի տակ:

— Պարոն, ես ձեր աարձանակից վախեցողը չեմ, բայց այդտա խօսեցէք մեզ հետ, ասացէք խնդրեմ, ի՞նչ գործի համար էք դուք մեզ այստեղ հրաւիրել, պատասխանեց Արուեղեանը:

— Ի՞նչ պէտք է մեր աջ ոտը կտրէք:

— Բոլորովին պատրաստ եմ, ոչ թէ ձեր աջ ոտը կտրելու, այլ և ձախինը, մինչև անգամ ձեր գլուխը, սակայն ինչպէս տեսնում եմ ձեր ոտը ինչ երևում է բոլորովին առողջ: Դուք չէիք, որ ինչ ընդունեցիք սանդուխների վերայ. այնպէս էիք բարձրանում, ինչպէս մի կարաւ: Եւ ինչու պէտք է կտրել:

— Այս համար որ ես չեմ ցանկանում այս ոտն ունենալ:

— Ուրեմն թող սուէք ինչ ասել ձեզ, որ դուք յիմար էք:

— Այդ ձեր գործը չէ, պարոն բժշկապետ:

— Ուրեմն ինչով է մեղանչել ձեր այդ առողջ ոտը:

— Ոչ մի բանով, բայց ասացէք խնդրեմ, համաձայն էք կտրելու թէ ոչ:

— Պարոն, ես ձեզ չեմ հասկանում, այդ բանը դուք կատարում էք ձեր առողջ բանակութեան մէջ: Մարդ ի՞նչպէս կը թոյլատրէ իւր առողջ ոտը կտրել, քանի որ նա այդ ոտը մի ամբողջ թաղաւորութեան հետ չի փոխել:

— Զէք ցանկանում կատարել մեր խնդիրը, պ. բժշկապետ:

— Երբ դուք կը յայտնէք պատճառը, գուցէ այն



ժամանակ կատարուի ձեր խնդիրը:

—Այժմ ոչինչ չեմ կարող յայտնել, ոտս կարելու պատճառը դուք մի տարուց յետոյ կիմանաք: Կրօղ եմ գտնիս ձեզ հետ, որ իմ բազար կախուած է այս ոտից, որ պէտք է անպատճառ կտրել: Համաձայնեցէք որ իմ բազարս իմ կեանքս է:

—Այս դրան չեմ կտրել, մինչև որ չը յայտնէք ձեր անունն ու ազգանունը, ձեր բնակութեան տեղը և ձեր դադանիքը:

—Խորրը ձեզ յայտնի կը լինի միայն մի ուրիշ ժամանակ, բայց այժմ ոչ մի բան: Ատոցէք խնդրեմ, դուք համարում էք ինձ իրիւ մի պատուաւոր մարդ:

—Այ երբեք, պատուաւոր մարդը չի սպանալ սպանելու մի բժշկապետ մարդու: Չեր ստիպելով ես ամենեւին չեմ կտրել ձեր ոտը, իսկ եթէ դուք ցանկանում էք ինձ սպանել, սպանել մի անմեղ մարդու, որ աէր է մի մեծ պերգատաանի, ապա ուրեմն արձակեցէք ատրճանակը:

—Հորհակալ եմ պ. բժշկապետ, ես այժմ չեմ ցանկանում զործել այդ յիմար քայլը, սակայն հարկադրում եմ ձեզ կտրել իմ ոտը: Եթէ ինձ չը պարտաւորելու և վարձատրութիւն չը ստանալու համար չէք կտրում, ապա պէտք է կատարէք

դոնէ կարեկից քանուելու համար:

—Ինչպէս:

—Ահա այսպէս. ես ինքս այս բոպէիս ձեր աչքի առջ կը ջարդեմ իմ ոտս: Եւ ես առնելով ատրճանակը ուղղեց դէպի իւր ոտը արձակելու, բժշկապետը այդ տեսնելով յարձակուեց նրա վերայ և խլելով ատրճանակը արդիւնեց նրա յանդուգն արարքը:

—Թող տուէք, պ. բժշկապետ, թողէք 'ի սէր Աստուծոյ, դուք չէք ցանկանում մեր խնդիրը կատարել, դոնէ մենք լինինք կոպտութեամբ կատարենք: Ատոցէք պ. բժշկապետ և պատասխանեցէք մեր հետեւեալ հարցին. «մի՞թէ դուք այնքան անդուժ էք, որ առանց մի որ և է օգտի ցանկանում էք իմ անջանքներս ու վշտերս եռապատկել»:

—Պարոն, դուք բոլորովին յիմար էք, որի նմանը ես իմ կեանքում տեսած չեմ: Թող ձեր կամքը լինի. այս բոպէիս կը կտրեմ ձեր ոտը, զի ջարդը յետոյ մեղաւորը ես չեմ:

Ամեն բան պատրաստ էր անդամահատելու. երբ բժշկապետը ցանկանում էր զործ սկսել, Անդրեային հանդարտ և առանց վրդովմունքի ծխում էր իւր ծխաքարը, նոյնիւրով իւր ոտը, որ իրան հանդիստ ու դադար չէր տալիս: Աստատա մնաց իւր համոզմունքին և ահա կտրած



ոտն արդէն ընկած էր յատակի վերայ: Անդլեացին շարունակ ծխում էր:

Արուեղեանը այնպէս լաւ և քաջ կատարեց իւր պարտականութիւնը, որ աւելին սպասելն անկարելի էր: Յետոյ նա իւր հմուտեամբ շաա կարճ միջոցում բժշկեց վերքը և մի փայտեայ ոտ դրեց կտրածի տեղ: Վրա համար սա աւելի վարձատրուեց և օր աւուր աւելանում էին նրանց բարեկամական սէրն ու պատիւը:

Մի ժամանակից յետոյ Անդլեացին թողեց Փարիզը: Նա արտասուելեց աչքերով և սրտի զգացմունքից շնորհակալութիւն արաւ բժշկապետին ոտը կտրելուն համար: Այնուհետև նա ծանապարհուեց Անգլիա՝ հայրենիքը: Չորս ամիս անցնելուց յետոյ, բժշկապետ Արուեղեանը Լօնդոնից մի նամակ ստացաւ հետևեալ բովանդակութեամբ:

«Այս նամակի մէջ ներփակած ուղարկում եմ մի մուրհակ 900 րուբլու, խնդրեմ բարեհաճէք Փարիզի բնակիչ պ. Պ.-ից ստանալ այդ գումարը, որպէս ապացոյց մեզ անկեղծ երախտադիտութեան: Պուք երկրիս երեսին մեզ ամենաբազմաթիւ մարդը դարձրիք, մեր ոտի մի մասը կտրելով, որ բազաւորութեանս միակ արդեւրդն էր հանգիստանում: Պ. բժշկապետ, այժմ պէտք է բացատրեմ իմ

զաղանիքը, որ այնքան հեռաքրքրում էր ձեզ և որի պատճառաւ դուք մեզ յիմար ածականն էիք տալիս:

Երկար ժամանակ մնալով օտարութեան մէջ՝ Հնդկաստան, վերջապէս վերադարձոյ հայրենիքս՝ Անգլիա: Մեր շրջաններում ես ծանօթացայ զեղաւեսիլ և հրաշեայ օրիորդ Լամիլայի հետ, որի հայեացքները վերջին աստիճանի ընկճել էին ինձ: Աս սկսեցի սրաշակ նրան նախինչպէս ամենատաջին զեղեցիկուհու և երկրորդն՝ իբրև ամենահարուստ առհմի դասեր: Մեր սէրը հեղհեղեղ սաստկանում էր, նամակներին վախճան չը կար, այնպիսի դրութեան և երևակայութեան էի ենթարկուած, որ մի օր առանց նրան տեսնելու օրս օր չէր լինում: Նա շաա սիրում էր ինձ, սակայն մի արտաքին հայեացք թոյլ չէր տալիս նրան բոլորովին ինձ սեպհականացնելու: Ինձ կախարդում էր նրա միակ զեղեցիկութիւնն ու երկնային համեստ բնութրութիւնն:

Այս, սիրելի Արուեղեան, ես անչափ ուրախ էի, որ նրա բոլոր պաշտոններից առաջինն էի, որ արժանանում էի նրա սիրալիր նամակներին: Նա ինձ աւելի և աւելի էր սիրում, սակայն մի առիթ զրգում էր նրան յետ կենալ իւր գործողութիւններից: Աս պարզապէս առաջարկեցի նրան ամուս-



նանալու ինձ հետ, բայց զժբաղդաբար մերժումն ստացայ: Սակաւ չէին աշխատում նրա ծնողներն ու ազգականները ինձ հետ ամուսնացնելու, բայց նա անդրդուելի էր: Նրկար ժամանակ չը կարողացայ դրա պատճառը գտնել, թէ ինչու վերջին անգամներս նա երեսը դարձնում էր ինձանից, երբ ամուսնանալու համար հարց էր լինում: Վերջապէս նրա քոյրերից մէկն բացեց զազանիքը: Լճիկան շատ գեղեցիկ էր՝ սակայն մի պակասութիւն ունէր, որի համար խորշում էր ինձանից, երկիւղ կրելով որ ես խմանալով այն զազանիքը, զուցէ իրան չը սիրեմ:

Ասա ձախ ոտից զուրկ էր: Նա բոլորովին չը տարակուսուեցայ, այլ մտածեցի ինձ նրան նմանացնել և շատ շնորհակալ եմ, պ. Սրուեղեան, որ դուք կատարեցիք մեր ցանկութիւնը կտրելով մեր ոտը, որ և հասցայ նպատակիս:

Ես փայտոտով վերադարձայ Լճնդօն: Առաջին զործս այն էր, որ Լճիկային այցելութեան գնացի: Նա ինձ կտրուած ոտով տեսնելով ուշաթափ ընկաւ, մենք նրան զօրով ուշքի բերինք: Քաղաքի բնակիչներն արդէն լրագրերից խմացել էին, որ ես ձիարշաւի ժամանակ վայր էի ընկել ձիուց և ոտս ջախջախել: Ամենքն ցաւում էին ինձ վերայ: Վերջապէս Լճիկային համաձայնեցրինք իմ կինը

լինելու, բայց և այնպէս պսակից յետոյ յայտնեցի նրան իմ զազանիքը, թէ ո՞ր աստիճան նուիրուած էի իրեն, որ ոտս չը խնայեցի. նա այդ խմանալով եռապատկեց իւր սէրը դէպի ինձ: Պ. բժշկապետ, եթէ ես ունենայի այլ ևս տաան ոտներ յօժարութեամբ կը նուիրէի Լճիկայի սիրուն նրանց կտրել տալով: Վանի դեռ կենդանի եմ իմ զոհունակութիւնս պիտի մնայ դէպի ձեզ բոլորովին անփոփոխ, եկէք Լճնդօն մեզ այցելութեան և վերահասուեղէք մեր երջանութեան, այն ժամանակ զուցէ յետ առնէք ձեր «պ. դուք յիմար էք, որի նմանը ես իմ կեանքում տեսած չեմ» խօսքերը:

Ծեր բարեկամ

Վարդուս S . . . . .

Բժշկապետ Սրուեղեանը այս զուարճալի անցքը պատմեց իւր բոլոր ծանօթներին և բարեկամներին և միշտ ծիծաղելով ասում էր այս խօսքերը. «Թէպէտ և երջանիկ է, այնուամենայնիւ նա յիմար է»: Ահա նամակի պատասխանը, որ ուղարկած էր Լճնդօն:

Ողորմած պարոն

Վարդուս S.

Շատ շնորհակալ եմ ձեզ ուղարկած նուէրի



Համար, ես չեմ կարծում, որ այդ նուէրը իմ կատարած բժշկութեանս համար է: Ենթահարում եմ ձեր ամուսնութիւնը, որ ձեր սրտի ցանկացածի հետ էք պսակուած: Նշմարիտ, կարել տալ ոտք մի վայել չաղել, մի առաքինի, նաղելի օրհորդի համար շատ է, բայց և այնպէս չափազանց չէ, եթէ նրանից յետոյ պատրանք և խաբէրացութիւն դուրս չը գայ: Եւստի համար մի կողմ միայն արժէ գեղեցկութիւններին նուիրել, բայց միւսների համար արժէ նրանց և դուրսները: Այդ ամենից յետոյ, թոյլ տուէք, պարոն, պարտական լինել դէպի ձեզ և հաստատ մնալու դորձեալ իմ առաջուայ դատողութեան վերայ: «Թէպէտ դուք այս ըտպէիս դանկում էք ամուսնական կեանքի ամենաքաղցր դարունքի, գրախտի մէջ, այնուամենայնիւ դուք յիմար էք և մեր սասանների ձգտարածութիւնը յետոյ պիտի հասկանաք:

Պատուելի պարոն, կանցնի երկու տարի և դուք կը արանջաք թէ ինչո՞ւ ձեր ոտք կարել տուած էք ծունկից բարձր, երեք տարուց յետոյ կը զղջաք, որ բաւական էր նուիրել սրունդից միայն կարելով, չորս տարուց յետոյ դուք հաստատելու էք, որ բաւական էր նուիրել միայն ոտի մի բութը, իսկ չինոյ տարուց յետոյ պէտք է ասէք, որ նրա համար մի փոքր մատն էլ շատ էր: Վեր-

ջապէս համոզուելու էք, որ մի կտրած եղունգն էլ շատ է կորցնել նրա համար: Այս ամենը ես ձեզ ասում եմ ոչ թէ ձեր չքնաղ ամուսնուն ձեր առաջ պախարակելու, այլ մեր համոզմունքն հաստատ պահելու և ապագան ձեր առաջ բերելու, որ համոզուէք ձեր արած սխալ գործի համար: Իմ երիտասարդ հասակումս ես զոհելու էի իմ կեանքը իմ սիրուհու համար, սակայն կեանքիս մէջ ոչ մի ժամանակ չը պէտք է կորցնէի նրա հա-հար և մի մատն: Առաջին համար ոչ մի ժամանակ չէի ցաւիլ, բայց երկրորդի համար զրկուելու էի ապագայում ապաստող զրեթէ բոլոր պաշտօններիցը: Եւ եթէ ես այդ գործէի, այն ժամանակ պէտք է որ յիմար լինէի: Մնամ միշտ ձեր բարեացակամ ամենախոնարհ ծառայ:

Վարդ Սրուեղեան:

Այդ ժամանակից յետոյ անցաւ 12 տարի: Փարիզի լորաց բանակի բժշկների մէջ մեծ խռովութիւն ընկաւ, այնպէս որ եթէ Սրուեղեանը մնար Փարիզում, իւր թշնամիները անշուշտ կը զլխատէին: Աս իւր անձը փրկելու համար փախաւ Լօնդօն, իւր հին բարեկամը մտաբերելով և հարց-



ներով զտաւ Սարգիսի տունը և արդէն ընդունված էր: Սառարանի հանդէպ բազկաթռի վերայ նստած էր մի հաստ մարդ, նա հազիւ կարող էր տեղից կանգնել այնպէս ծանր էր: Սարգիսը շրջապատուած էր քսան զանազան օրագիրներով և ամսաթերթերով և անդադար կարդում էր ու զարեջուր կոնծում:

— Բարեւ, բարեւ պատուելի բժշկապետ, բացականչեց հաստ մարդը, որը ոչ ոք էր, եթէ ոչ Սարգիսը: «Բժշկապետ, դուք չք բարկանաք ինձ վերայ, որ չեմ կարողանում ոտքի կանգնել, անիծեալ փայտոտ արգելում է ինձ ամեն մի գէպքում: Այնքաւ բարեկամ, դուք եկած էք ի հարկէ մեզ տեսութեան, արդեօք հաւատօնւմ էք, որ ձեր զուլախութիւնները կատարուած են:

— Ամենին ոչ, ես այժմ զրկուած եմ պաշտօնից և եկած եմ ձեր հովանաւորութիւնը գտնելու:

— Արեւմտեան մեզ մօտ բնակուելու, եղէք իմ բարեկամը և մխիթարէք մեզ: Դուք մի խելօք և զխառն մարդ էք, պ. Սրուեղեան, ես այդ փորձով խմացայ: Վրէժք պ. Սրուեղեան, որ եթէ ոտս չը խանգարէր ինձ, կապոյտ նաւազրօշ շոգենաւերի պէտք պիտի լինէի, այժմ ես բոլորովն անյարմար եմ հայրենիքիս ծառայութեան, այժմ ինձ մնում է նստել և լրագրներ կարդալ: Այժմ ինձ չունի, ոչ

պարահանդիսի մասնակցել չեմ կարողանում, խընդրեմ մեզ մխիթարող հանդիսանաք:


— Ձեր կինը աւելի լաւ կարող է մխիթարել քան ես:

— Ո՛հ, նրա մասին ոչինչ մի ասէք. պարահանդիսում նրա փայտոտ արգելեց պարելու և դրա համար նրան հրաժարեցրած են պարահանդիսներից: Նրա հետ այլ ևս չեմ ապրում և հեռացրած եմ ինձանից. թէպէտ և այսպէս այնուամենայնիւ նա շատ զեղեցիկ կին է: Ահա այսպէս դարձաւ իմ բազ դը պ. բժշկապետ, դադարենք դրա վերայ խօսելուց, մի այնպիսի աններելի քանցանք դործեցի, որ այսուհետեւ առաջն տունը անկարելի է: Եթէ ես ունենայի իմ նախկին ոտը, էլ չէի նուիրել եղունգի մի ամենաչնչին կտորը, մեզ համար թող խոստովանք լինի, ես սարսափելի յիմար էի, որ դործեցի մի մեծ յիմարութիւն, ձեր խօսքերը այն ժամանակ չէր ազդում ինձ վերայ, բայց այժմ . . . . . :

Բժշկապետ Սարգի Սրուեղեանը իւր ընտանիքով տեղաւորուեցաւ Սարգիսի ապարանքի սենեակներից մէկում և Անդրեանում դործ էր կատարում: Ահա ձեզ, սիրելի ընթերցող, սիրոյ մի սարսափելի զղջումը, կարգացէք և լաւ հասկացէք:

1608  
35923







№ 11.

Գինն է 10 կոպ.

Վաճառվում է Շուշույ Հայոց Հողերու Տե-  
ղութեան աստարանի գրավաճառանոցում և հրա-  
տարակէ մօտ:

Վիճել՝ Шуга. Аветы Г. Панкрат.

223

Գինն է 10 կոպ.

Գինն է 10 կոպ.

20 13

ՀՀ Ազգային գրադարան



NL0165984



